ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1
«15» մայիսի 2026թ. թիվ ՇՄՆ-COP17-26/02 պայմանագրի

ք.Երևան «09» «09» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վազգեն Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի մայիսի 15-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված Պատվիրատուի կողմից ներկայացված պատասխանատու անձի 2026 թվականի օգոստոսի 31-ի գրությամբ ներկայացված առաջարկությունը, ինչպես նաև պայմանագրի 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի մայիսի 15-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1. պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված №1.1-ի 11-րդ կետում «Կանաչ գոտու առանձին սոցիալական էջերի ստեղծում, կոնտենտի պատրաստում՝ ամենօրյա ռեժիմով, և դրանց առաջմղում (SMM)՝ ներառյալ գովազդ» բառերը փոխարինել «Կանաչ գոտու հաղորդակցման և մարքեթինգային գործողությունների պլանի, այդ թվում՝ սոցիալական մեդիայի, թվային գովազդային արշավի և էլ. փոստի մարքեթինգային արշավի գործողությունների պլանի մշակում, կոնտենտի պատրաստում և ֆոտո-վիդեո նկարահանում՝ միջոցառման օրերի (այդ թվում՝ պաշտոնական բացման արարողության) ընթացքում, համապատասխան հաղորդակցման նյութերի ապահովում՝ ըստ CBD COP17 միջոցառման հաղորդակցման ընդհանուր պլանի» բառերով,

1.1.2. պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված №2-ի «II փուլ» տողի «Մատուցված ծառայություն» սյունյակի «ստեղծված սոցիալական էջեր» բառերը փոխարինել «հաղորդակցման և մարքեթինգային մշակված գործողությունների պլան, այդ թվում՝ սոցիալական մեդիայի, թվային գովազդային արշավի և էլ. փոստի մարքեթինգային արշավի գործողությունների պլան» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Գևորգ Էմինի 8, բն. 35
ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011066439	ՀՀ 2470094349830000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02676654
էլ.փոստ – minenv@env.am	էլ.փոստ – info@background.am
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի տնօրեն
Արկադի Խաչատրյան	***Վազգեն Պողոսյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

"BACKGROUND PRODYCTION" LLC
02676654 BACKGROUND Production 02676654
«ԲԵԳՐԱՈՒՆԴ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ